ՎԱՐԿԻ ՀԱՄԱՐ՝ 3584 - ARM

ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(Ընթացիկ գործառնություններ)

(Հանրային արդյունավետության և ֆինանսական շուկաների ծրագիր. ենթածրագիր 1)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՎ

ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ

ՄԻՋԵՎ

ԹՎԱԳՐՎԱԾ Է 2017 թվականի հոկտեմբերի 27-ով

ARM 51060

ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(Ընթացիկ գործառնություններ)

ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ՝ թվագրված՝ 2017 թվականի հոկտեմբերի 27-ով, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ (Վարկառու) և ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ (ԱԶԲ) միջև:

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ, ՈՐ.

Ա) ԱԶԲ-ն Վարկառուից ստացել է 2017 թ. օգոստոսի 1-ով թվագրված՝ զարգացման քաղաքականության վերաբերյալ նամակը («Քաղաքականության նամակ»), որտեղ ամրագրված են որոշակի նպատակներ, գործունեության ծրագրեր և գործողություններ, որոնք նկարագրված են սույն Վարկային համաձայնագրի 1-ին Հավելվածում և նախատեսված են զարգացնելու Վարկառուի ֆինանսական հատվածը՝ կենտրոնանալով պետական պարտքի և ֆիսկալ ռիսկերի կառավարման համակարգի ամրապնդման, պետական արժեթղթերի և փողի շուկայի ենթակառուցվածքների խորացման, ներդրողների շրջանակի ընդլայնման և ընդհանուր թափանցիկության բարելավման վրա (Ծրագիր),

Բ) Ծրագիրը ներառում է ծրագրավորման մոտեցմամբ կազմված առաջին ենթածրագիրը, ինչպես նկարագրված է սույն Վարկային համաձայնագրի 1-ին Հավելվածի 1-ին կետում (Ծրագրավորման մոտեցում), և Վարկառուն դիմել է ԱԶԲ-ին՝ Ծրագրի իրականացման նպատակներով վարկ ստանալու համար,

Գ) ԱԶԲ-ն համաձայնել է վարկ տրամադրել Վարկառուին ԱԶԲ-ի սովորական կապիտալ ռեսուրսներից՝ սույն Համաձայնագրով սահմանված դրույթների և պայմանների համաձայն,

Սույն Համաձայնագրով Կողմերը համաձայնության են գալիս հետևյալի մասին.

ՀՈԴՎԱԾ I

Վարկային կանոնակարգ: Սահմանումներ

Բաժին 1.01. ԱԶԲ-ի՝ 2017 թ. հունվարի 1-ով թվագրված՝ Ընթացիկ գործառնությունների Վարկային կանոնակարգի («Վարկային կանոնակարգ») բոլոր դրույթները սույնով կիրառելի են դառնում սույն Վարկային համաձայնագրի նկատմամբ՝ նույն ուժով և գործողությամբ՝ այնպես, եթե դրանք ամբողջությամբ սահմանված լինեին սույն փաստաթղթում, սակայն ենթակա են հետևյալ փոփոխությունների.

ա) 2.01(tt) բաժինը հանվել է և փոխարինվել հետևյալով.

Ծրագիր (Program) եզրույթը նշանակում է՝ ծրագիր, որի համար ԱԶԲ-ն համաձայնել է Վարկ տրամադրել, ինչպես նկարագրված է Վարկային համաձայնագրում. ընդ որում այդ նկարագրությունը կարող է ժամանակ առ ժամանակ փոփոխվել ԱԶԲ-ի և Վարկառուի համաձայնությամբ,

բ) Ծրագիր (Project) եզրույթը որտեղ էլ օգտագործվում է Վարկային կարգավորումներում, պետք է փոխարինվի Ծրագիր (Program) եզրույթով:

գ) 2.01(vv) բաժինը հանվել է և փոխարինվել հետևյալով.

Ծրագիրն (Program) իրականացնող մարմին եզրույթը նշանակում է՝ միավոր կամ միավորներ, որոնք պատասխանատու են Ծրագրի իրականացման համար, ինչպես նշված է Վարկային համաձայնագրում:

դ) Ծրագիրն (Project) իրականացնող մարմին եզրույթը որտեղ էլ օգտագործվում է Վարկային կարգավորումներում, պետք է փոխարինվի Ծրագիրն (Program) իրականացնող մարմին եզրույթով:

Բաժին 1.02. Սույն Վարկային համաձայնագրում որտեղ էլ օգտագործված են Վարկային կարգավորումներով սահմանված եզրույթները, դրանք ունեն Վարկային կարգավորումներում սահմանված համապատասխան նշանակությունը, եթե սույն փաստաթղթում դրանք չեն փոփոխվել, կամ համատեքստից այլ բան չի ենթադրվում: Սույն Վարկային համաձայնագրում գործածված մյուս եզրույթներն ունեն հետևյալ նշանակությունը.

ա) «ՀԿԲ» նշանակում է՝ Վարկառուի՝ Հայաստանի կենտրոնական բանկ:

բ) «Համարժեք միջոցներ տեղական արժույթով» նշանակում է՝ Ծրագրի շրջանակում Վարկի միջոցներից ձևավորված տեղական արժույթ, ինչպես նշված է սույն Վարկային համաձայնագրի 4-րդ Հավելվածի 4-րդ կետում:

գ) «Դեպոզիտային հաշիվ» նշանակում է՝ այն հաշիվը, որը նշված է սույն Վարկային համաձայնագրի 3-րդ Հավելվածի 3ա կետում:

դ) «Իրականացնող մարմիններ» նշանակում է՝ ՖՆ և ՀԿԲ կամ դրանցից յուրաքանչյուրի յուրաքանչյուր իրավահաջորդ, որն ընդունելի է ԱԶԲ-ի համար:

ե) «Վարկային հատկացումների ձեռնարկ» նշանակում է՝ ԱԶԲ-ի վարկային հատկացումների ձեռնարկ (2017 թվական, ժամանակ առ ժամանակ փոփոխված):

զ) «ՖՆ» նշանակում է՝ Վարկառուի ֆինանսների նախարարություն:

է) «Քաղաքականության մատրիցա» նշանակում է՝ Վարկառուի և ԱԶԲ-ի միջև համաձայնեցված և Քաղաքականության նամակին կցված քաղաքականության մատրիցա, որը սահմանում է Վարկառուի կողմից Ծրագրի շրջանակներում իրականացված կամ իրականացվելիք գործողությունները:

ը) «Ծրագիրն իրականացնող մարմին»՝ Վարկային կարգավորումների նպատակներից ելնելով և դրա իմաստով նշանակում է՝ ՖՆ կամ նրա ցանկացած իրավահաջորդ, որն ընդունելի է ԱԶԲ-ի համար և պատասխանատու է Ծրագրի իրականացման համար:

ՀՈԴՎԱԾ II

Վարկը

Բաժին 2.01. ա) ԱԶԲ-ն համաձայնում է ԱԶԲ-ի սովորական կապիտալ ռեսուրսներից Վարկառուին տրամադրել քառասուն միլիոն ԱՄՆ դոլարի (40,000,000 $) չափով վարկ, և նշված գումարը կարող է ժամանակ առ ժամանակ փոխարկվել Արժույթի փոխարկման միջոցով՝ սույն Վարկային համաձայնագրի 2.06-րդ բաժնի դրույթներին համապատասխան:

բ) Վարկն ունի մայր գումարի մարման 12 տարի ժամկետ և վարկի արտոնյալ ժամանակահատված, ինչպես սահմանված է սույն բաժնի «գ» կետում:

գ) Սույն բաժնի «բ» կետում օգտագործված «արտոնյալ ժամանակահատված» եզրույթը նշանակում է՝ մայր գումարի առաջին մարման ամսաթվին նախորդող ժամանակահատված՝ համաձայն սույն Վարկային համաձայնագրի 2-րդ Հավելվածում սահմանված մարման ժամանակացույցի:

Բաժին 2.02. Վարկառուն ժամանակ առ ժամանակ ԱԶԲ-ին վճարելու է տոկոսներ մայր գումարի առհանված և դեռևս չվճարված վարկի համար՝ յուրաքանչյուր տոկոսի վճարման ժամանակահատվածի համար հետևյալի գումարին հավասար չափով.

ա) LIBOR և

բ) 0.60 %, ինչպես նախատեսված է Վարկային կարգավորումների 3.02-րդ բաժնով, հանած 0.10 %, ինչպես նախատեսված է Վարկային կարգավորումների 3.03-րդ բաժնով:

Բաժին 2.03. Վարկառուն տարեկան կտրվածքով վճարելու է 0.15%-ի չափով պարտավճար: Այդ գումարը հաշվարկվելու է Վարկի ամբողջական գումարի մասով (հանած ժամանակ առ ժամանակ առհանվող գումարները)՝ սկսած սույն Վարկային համաձայնագրի ամսաթվից 60 օր հետո:

Բաժին 2.04. Վարկի տոկոսագումարը և այլ վճարները կատարվում են կիսամյակային կտրվածքով՝ յուրաքանչյուր տարվա մայիսի 15-ին և նոյեմբերի 15-ին:

Բաժին 2.05. Վարկառուն Վարկային հաշվից առհանված՝ Վարկի մայր գումարը վերադարձնում է սույն Վարկային համաձայնագրի 2-րդ Հավելվածում սահմանված դրույթներին համաձայն:

Բաժին 2.06. ա) Պարտքի դյուրին կառավարման նպատակով Վարկառուն կարող է

ցանկացած ժամանակ դիմել՝ Վարկի պայմաններում հետևյալ փոփոխությունները կատարելու խնդրանքով.

i) Վարկի ընդհանուր մայր գումարի կամ դրա մի մասի, ինչպես առհանված և չծախսված, այնպես էլ չառհանված, Վարկի Արժույթի փոփոխություն որևէ այլ Հաստատված Արժույթի,

ii) Վարկի ընդհանուր մայր գումարի կամ դրա մի մասի, ինչպես առհանված, այնպես էլ դեռևս չվճարված, նկատմամբ կիրառվող տոկոսադրույքի փոխարինում լողացող դրույքից ֆիքսված դրույքի կամ հակառակը,

iii) Վարկի ընդհանուր մայր գումարի կամ դրա մի մասի, ինչպես առհանված, այնպես էլ դեռևս չվճարված, նկատմամբ կիրառելի լողացող դրույքի սահմանափակում այդ լողացող դրույքի նկատմամբ տոկոսադրույքի սահմանային չափը հաստատելու կամ տոկոսադրույքի առավելագույն և նվազագույն չափերը սահմանելու միջոցով:

բ) Սույն բաժնի «ա» կետի համաձայն առաջարկված ցանկացած փոխարկում, որը ընդունելի է ԱԶԲ-ի կողմից, համարվում է «Փոխարկում», ինչպես սահմանված է Վարկային կարգավորումների 2.01(f) բաժնում, և ուժի մեջ է մտնում Վարկային կարգավորումների V հոդվածի և Փոխարկման ուղեցույցների դրույթներին համապատասխան:

ՀՈԴՎԱԾ III

Վարկի միջոցների օգտագործումը

Բաժին 3.01. Վարկառուն ապահովում է, որ վարկային միջոցներն օգտագործվեն Ծրագրի ծախսերը ֆինանսավորելու նպատակով՝ սույն Վարկային համաձայնագրում սահմանված դրույթներին համապատասխան:

Բաժին 3.02. ԱԶԲ-ի և Վարկառուի միջև համաձայնությամբ Վարկի միջոցներն առհանվում են համաձայն սույն Վարկային համաձայնագրի 3-րդ Հավելվածի դրույթների, ինչպես որ նշված Հավելվածը ժամանակ առ ժամանակ վերանայված կլինի:

Բաժին 3.03. Վարկային կարգավորումների 9.02-րդ բաժնում նախատեսված նպատակներով Վարկի փակման ամսաթիվն է 2017 թ. դեկտեմբերի 31-ը կամ այնպիսի այլ ժամկետ, որն ԱԶԲ-ի և Վարկառուի միջև ժամանակ առ ժամանակ կհամաձայնեցվի:

ՀՈԴՎԱԾ IV

Հատուկ պայմաններ

Բաժին 4.01. Ծրագիրն իրականացնելիս Վարկառուն կատարում է կամ նպաստում է, որ կատարվեն սույն Վարկային համաձայնագրի 4-րդ Հավելվածում սահմանված բոլոր պարտավորությունները:

Բաժին 4.02. Որպես Վարկային կարգավորումների 7.01-ին և 7.04-րդ բաժիններում նշված տեղեկության և հաշվետվությունների մաս՝ Վարկառուն ԱԶԲ-ին տրամադրում կամ ապահովում է, որ տրամադրվեն բոլոր այն հաշվետվությունները և տեղեկությունները, որոնք Ծրագրի իրականացման համար ԱԶԲ-ի կողմից ողջամտորեն կպահանջվեն. ներառյալ Քաղաքականության նամակում նշված թիրախների իրագործման և միջոցառումների կատարման մասով:

ՀՈԴՎԱԾ V

Ուժի մեջ մտնելը

Բաժին 5.01. Վարկային կարգավորումների 10.01(f) բաժնի նպատակներով որպես սույն Վարկային համաձայնագրի ուժի մեջ մտնելու լրացուցիչ պայման է նշվում հետևյալը. Քաղաքականության մատրիցայի քաղաքականության գործողություններ սյունակի 7-րդ և 8-րդ կետերում նշված քաղաքականության միջոցառումներից յուրաքանչյուրն իրականացվել է, և դրանց իրականացմանն առնչվող հավաստող փաստաթղթերը, ինչպես նշված է Քաղաքականության մատրիցայում, տրամադրվել են՝ ԱԶԲ-ի համար գոհացուցիչ պայմաններով:

Բաժին 5.02. Վարկային կարգավորումների 10.04-րդ բաժնի նպատակներով սույն Վարկային համաձայնագրի ուժի մեջ մտնելու ամսաթիվ է սահմանվում է սույն Վարկային համաձայնագրի ամսաթվից 90 օր հետո ընկած ամսաթիվը:

ՀՈԴՎԱԾ VI

Այլ դրույթներ

Բաժին 6.01. Վարկառուի ֆինանսների նախարարը նշանակվում է որպես Վարկառուի ներկայացուցիչ՝ Վարկային կարգավորումների 12.02-րդ բաժնի նպատակների համար:

Բաժին 6.02. Վարկային կարգավորումների 12.01-ին բաժնի նպատակներով նշվում են հետևյալ հասցեները.

Վարկառուի համար՝

Ֆինանսների նախարարություն
Հայաստանի Հանրապետություն
Երևան, 0010
Մելիք-Ադամյան 1
Ֆաքսիմելային համար՝
(374 11) 800-132

ԱԶԲ-ի համար՝

Ասիական զարգացման բանկ
Ֆիլիպիններ, ք. Մանդալույոնգ
1550 Մետրո Մանիլա,
ԱԶԲ պողոտա 6
Ֆաքսիմելային
համարներ՝
(632) 636-2444
(632) 636-2424.

ՎԵՐՈՆՇՅԱԼԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ սույն Համաձայնագրի Կողմերը, գործելով իրենց պատշաճ լիազորված ներկայացուցիչների միջոցով, ապահովում են, որ սույն Վարկային համաձայնագիրն ստորագրվի վերը նշված առաջին օրվա և տարվա դրությամբ իրենց համապատասխան անուններով և հանձնվի ԱԶԲ-ի գլխավոր գրասենյակ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Վարդան Արամյան
Ֆինանսների նախարար

[անունը և պաշտոնը]

ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿ

Շեյն Ռոզենտալ
Հայաստանում մշտական ներկայացուցչության տնօրեն
[անունը և պաշտոնը]

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Ծրագրի նկարագրություն

1. Ծրագրավորման մոտեցման գլխավոր նպատակն է Վարկառուի ֆինանսական շուկաների հնարավորության ավելացումը: Ծրագրավորման մոտեցումը ներառում է երկու ենթածրագրից, և Ծրագիրը առաջին ենթածրագիրն է: Ծրագրի շրջանակը ներառում է. ա) Վարկառուի պետական պարտքի և ֆիսկալ ռիսկի կառավարման հզորացումը, բ) պետական արժեթղթերի և փողի շուկայի ենթակառուցվածքի ամրապնդումը, գ) ֆինանսական գործիքների բազայի ընդլայնումը և հաշվապահական ստանդարտների ու աուդիտի պահանջների բարեփոխումների միջոցով կորպորատիվ թափանցիկության բարձրացումը: Ծրագիրն առավել մանրամասն նկարագրված է Քաղաքականության նամակում:

2. Ակնկալվում է Ծրագիրն ավարտել մինչև 2017 թ. դեկտեմբերի 31-ը:

ՀԱՎԵԼՎԱԾ 2

Մարման ժամանակացույց

1. Ստորև ներկայացված աղյուսակում սահմանվում են Վարկի Մայր գումարի մարման ամսաթվերը և Մայր գումարի մարման յուրաքանչյուր ամսաթվի ժամանակ Վարկի ընդհանուր Մայր գումարի վճարվելիք տոկոսը (Վճարման մասնաբաժին): Մայր գումարի առաջին մարման ամսաթվի դրությամբ Վարկի միջոցներն ամբողջությամբ առհանված լինելու դեպքում Մայր գումարի մարման յուրաքանչյուր ամսաթվի դրությամբ Վարկառուի կողմից մարվող Վարկի Մայր գումարը որոշվում է ԱԶԲ-ի կողմից՝ բազմապատկելով (ա) Վարկի ընդհանուր մայր գումարը, որն առհանվել է և չի վերադարձվել Մայր գումարի առաջին մարման օրվա դրությամբ (բ) Մայր գումարի յուրաքանչյուր մարման օրվա դրությամբ վճարման մասնաբաժնով. նման մարման գումարն ըստ անհրաժեշտության ճշգրտվում է՝ սույն Հավելվածի 4-րդ կետում նշված ցանկացած գումար նվազեցնելու նպատակով, որի նկատմամբ կիրառվում է Արժույթի Փոխարկումը:

Մարման ամսաթիվը	Վճարման մասնաբաժինը (արտահայտված որպես %)
15-ը նոյեմբերի 2020	4.166667
15-ը մայիսի 2021	4.166667
15-ը նոյեմբերի 2021	4.166667
15-ը մայիսի 2022	4.166667
15-ը նոյեմբերի 2022	4.166667
15-ը մայիսի 2023	4.166667
15-ը նոյեմբերի 2023	4.166667
15-ը մայիսի 2024	4.166667
15-ը նոյեմբերի 2024	4.166667
15-ը մայիսի 2025	4.166667

15-ը նոյեմբերի 2025	4.166667
15-ը մայիսի 2026	4.166667
15-ը նոյեմբերի 2026	4.166667
15-ը մայիսի 2027	4.166667
15-ը նոյեմբերի 2027	4.166667
15-ը մայիսի 2028	4.166667
15-ը նոյեմբերի 2028	4.166667
15-ը մայիսի 2029	4.166667
15-ը նոյեմբերի 2029	4.166667
15-ը մայիսի 2030	4.166667
15-ը նոյեմբերի 2030	4.166667
15-ը մայիսի 2031	4.166667
15-ը նոյեմբերի 2031	4.166667
15-ը մայիսի 2032	4.166659
Ընդամենը	100.000000

2. Մայր գումարի առաջին մարման ամսաթվի դրությամբ Վարկի միջոցներն ամբողջությամբ առհանված չլինելու դեպքում Մայր գումարի մարման յուրաքանչյուր ամսաթվի դրությամբ Վարկառուի կողմից մարվող Վարկի Մայր գումարը որոշվում է հետևյալ կերպով.

ա) Մայր գումարի մարման առաջին ամսաթվի դրությամբ վարկային ցանկացած միջոցի առհանման չափով Վարկառուն վերադարձնում է այդ ամսաթվի դրությամբ առհանված և չվճարված գումարը՝ սույն Հավելվածի 1-ին կետի համաձայն:

բ) Մայր գումարի առաջին մարման ամսաթվից հետո ցանկացած կատարված առհանում պետք է հետ վերադարձվի նման առհանման ամսաթվին հաջորդող՝ Մայր գումարի յուրաքանչյուր մարման ամսաթվին ԱՋԲ-ի կողմից սահմանված գումարի չափով՝ այդպիսի յուրաքանչյուր առհանման գումարը բազմապատկելով կոտորակով, որի համարիչը սույն Հավելվածի 1-ին կետի աղյուսակում սահմանված՝ Մայր գումարի տվյալ մարման ամսաթվի դրությամբ սկզբնական Վճարման մասնաբաժինն է (Սկզբնական վճարման մասնաբաժին), և որի հայտարարը՝ այդ ամսաթվին կամ դրանից հետո ընկնող՝ Մայր գումարի մարման բաց թողնված ամսաթվերից՝ բոլոր Սկզբնական վճարման մասնաբաժինների ընդհանուր գումարը: Վճարվող նման գումարներն ըստ անհրաժեշտության ճշգրտվում են՝ սույն Հավելվածի 4-րդ կետում նշված ցանկացած գումար նվազեցնելու նպատակով, որի նկատմամբ կիրառվում է Արժույթի Փոխարկումը:

3. Բացառապես Մայր գումարի ցանկացած մարման ամսաթվի դրությամբ վճարվելիք Մայր գումարները հաշվարկելու նպատակով Մայր գումարի մարման ցանկացած ամսաթվին նախորդող 2 օրացուցային ամսվա ընթացքում կատարված առհանումները դիտարկվում են որպես առհանված և չվճարված՝ առհանման ամսաթվին հաջորդող՝ Մայր գումարի երկրորդ մարման ամսաթվի դրությամբ, և ենթակա են վճարման առհանման ամսաթվին հաջորդող՝ Մայր գումարի երկրորդ մարման ամսաթվից սկսած՝ Մայր գումարի մարման յուրաքանչյուր ամսաթվին:

4. Անկախ սույն Հավելվածի 1-ին և 2-րդ կետերի դրույթներից՝ Վարկի մայր գումարի առհանված ամբողջ գումարի կամ դրա մի մասի Արժույթի փոխարկման դեպքում Հաստատված արժույթի, նման հաստատված արժույթի փոխարկված գումարի չափը, որը ենթակա է վճարման Փոխարկման ժամանակահատվածում ընկնող Մայր գումարի մարման ցանկացած ամսաթվի դրությամբ, սահմանվում է ԱՋԲ-ի կողմից՝ նշված փոխարկումից անմիջապես առաջ եղած իր արժույթով արտահայտված նման գումարը բազմապատկելով կա՛մ (i) փոխարժեքով, որն արտացոլում է ԱՋԲ-ի կողմից տվյալ փոխարկման հետ կապված արժույթի հեջավորման գործարքի շրջանակներում վճարվելիք՝ Հաստատված արժույթով մայր գումարները, կա՛մ (ii) եթե ԱՋԲ-ն Փոխարկման ուղեցույցների համաձայն այդպես որոշի, սահման-ված տոկոսադրույքի (Screen Rate) փոխարժեքի բաղադրիչով:

5. Եթե Վարկի Մայր գումարի առհանված և չվճարված մասը ժամանակ առ ժամանակ արտահայտվում է Վարկի մեկից ավելի արժույթներով, ապա սույն Հավելվածի դրույթները կիրառվում են յուրաքանչյուր Վարկի արժույթով արտահայտված գումարի համար առանձին. այնպես, որ յուրաքանչյուր նման գումարի համար մշակվի մարման առանձին ժամանակացույց:

ՀԱՎԵԼՎԱԾ 3

Վարկային միջոցների առհանումը

1. Բացառությամբ սույն Հավելվածում սահմանված ձևի կամ ԱԶԲ-ի հետ այլ համաձայնության ձեռք բերման դեպքերի, վարկային միջոցները հատկացվում են Վարկային հատկացումների ձեռնարկին համապատասխան:

2. Վարկառուի կողմից ԱԶԲ-ին է ներկայացվում Վարկային հաշվից առհանում կատարելու դիմում, որը կազմվում է ԱԶԲ-ի համար ընդունելի ձևով:

3. ա) Վարկային հաշվից առհանում կատարելու վերաբերյալ առաջին դիմումը ԱԶԲ-ին ներկայացնելուց առաջ Վարկառուն նշում է Հայաստանի կենտրոնական բանկի հաշիվը (Դեպոզիտային հաշիվ), որին մուտքագրվում են Վարկային հաշվից կատարվող բոլոր առհանումները: Դեպոզիտային հաշիվը բացվում, կառավարվում և փակվում է ԱԶԲ-ի կիրառելի կարգավորումներին և ընթացակարգերին համապատասխան:

բ) Դեպոզիտային հաշվի հետ կապված՝ վարվում են առանձին հաշվեմատյաններ և գրանցումներ՝ ԱԶԲ-ի համար ընդունելի հաշվապահական սկզբունքներին համաձայն: ԱԶԲ-ի պահանջով՝ Վարկառուն պետք է ունենա Դեպոզիտային հաշվի ֆինանսական հաշվետվությունների աուդիտ՝ անկախ աուդիտորների կողմից, որոնց որակավորումները, փորձառությունը և տեխնիկական առաջադրանքն ընդունելի են ԱԶԲ-ի համար, համապատասխանում են աուդիտի միջազգային ստանդարտներին կամ ԱԶԲ-ի համար ընդունելի՝ դրանց տեղական համարժեքին: Դրանք կազմելուց հետո՝ կարճ ժամկետում, սակայն ցանկացած դեպքում ոչ ուշ, քան ԱԶԲ-ի պահանջի ամսաթվից 6 ամիս հետո, նման աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների կրկնօրինակները և ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորների կարծիքները տրամադրվում են ԱԶԲ-ին՝ անգլերենով:

4. Սույն Հավելվածին կից՝ նշված որևէ միավորի ֆինանսավորման նպատակով ոչ մի Վարկային միջոց չի կարող առհանվել:

5. Վարկառուն կարող է առհանել Վարկային հաշվից սույն Վարկային համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո:

Չթույլատրվող ծախսերի ցանկ

Վարկային միջոցների որևէ առհանում չի կատարվում հետևյալի համար.

i) ծախսեր այնպիսի ապրանքների համար, որոնք ներառված են Միավորված ազգերի կազմակերպության Ստանդարտ միջազգային առևտրի դասակարգման 3-րդ Փոփոխության (ՍՄԱԴ, Փոփ. 3) հետևյալ խմբերում կամ ենթախմբերում կամ ՍՄԱԴ-ի մեջ հետագա փոփոխությունների արդյունքում ներառման ենթակա ցանկացած խմբում կամ ենթախմբում, ինչպես նշվում է ԱԶԲ-ի՝ Վարկառուին ուղղվող ծանուցման մեջ.

Աղյուսակ. Չթույլատրված միավորներ

Գլուխ	Բաժին	Միավորների նկարագրություն
112		Ալկոհոլային խմիչքներ
121		Չմշակված ծխախոտ, ծխախոտի թափոններ
122		Մշակված ծխախոտ (ծխախոտին փոխարինող նյութ պարունակող կամ չպարունակող)
525		Ռադիոակտիվ նյութեր և դրանց հետ կապված նյութեր
667		Մարգարիտներ, թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, մշակված կամ չմշակված
718	718.7	Ատոմային ռեակտորներ և դրանց մասեր, վառելիքի էլեմենտներ (քարթրիջներ), չճառագայթված, ատոմային ռեակտորների համար
728	728.43	Ծխախոտի մշակման սարքավորումներ

2

897	897.3	Ոսկերչական զարդեր՝ ոսկու, արծաթի կամ պլատինի խմբին պատկանող մետաղներից (բացառությամբ ժամացույցների և ժամացույցների պատյանների), և ոսկերիչների կամ արծաթագործների աշխատանքներ (ներառյալ տեղադրված թանկարժեք քարերը)
971		Ոսկի, ոչ դրամական (բացառությամբ ոսկու հանքանյութի և խտանյութերի)

Աղբյուրը՝ Միավորված ազգերի կազմակերպություն:

ii) ծախսեր Վարկառուի արժույթով կամ այնպիսի ապրանքների համար, որոնք մատակարարվում են Վարկառուի տարածքից,

iii) ծախսեր այնպիսի ապրանքների համար, որոնք մատակարարվում են այնպիսի պայմանագրի շրջանակներում, որը ֆինանսավորելու է կամ համաձայնել է ֆինանսավորել որևէ տեղական կամ միջազգային ֆինանսավորող հաստատություն կամ գործակալություն՝ ներառյալ ԱԶԲ-ից ստացված որևէ վարկի կամ դրամաշնորհի շրջանակներում ֆինանսավորվող ցանկացած պայմանագիր,

iv) ծախսեր այնպիսի ապրանքների համար, որոնք նախատեսված են ռազմական կամ ռազմական նպատակների համար կամ որպես պերճանքի առարկաներ օգտագործելու համար,

v) ծախսեր թմրանյութերի համար,

vi) ծախսեր շրջակա միջավայրի համար վտանգավոր ապրանքների համար, որոնց արտադրությունը, օգտագործումը կամ ներկրումն արգելված են Վարկառուի օրենսդրությամբ կամ միջազգային այնպիսի համաձայնագրերով, որոնց կողմ է հանդիսանում Վարկառուն, և

vii) ծախսեր, որոնք կատարվել են որևէ վճարի հաշվին, որն արգելված է Վարկառուի կողմից՝ համաձայն Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրության VII գլխի շրջանակներում ընդունված՝ Միավորված ազգերի կազմակերպության Անվտանգության խորհրդի որոշման:

ՀԱՎԵԼՎԱԾ 4

Ծրագրի իրականացում և այլ հարցեր

Իրականացման կազմակերպում

1. ՖՆ-ն Ծրագրի իրականացնող մարմինն է և պատասխանատու է Ծրագրի ընդհանուր իրականացման, այդ թվում՝ քաղաքականության բոլոր միջոցառումների հետ համապատասխանության, միջոցների հատկացման և գրանցումներ վարելու համար: ՖՆ-ն և ՀԿԲ-ն Ծրագրի շրջանակներում իրենց համապատասխան բաղադրիչներն իրականացնող մարմիններն են:

Քաղաքականության միջոցառումներ և երկխոսություն

2. Վարկառուն ապահովում է, որ Ծրագրի շրջանակներում ընդունված բոլոր քաղաքականության միջոցառումները, ինչպես սահմանված են Քաղաքականության նամակի և Քաղաքականության մատրիցայի մեջ, շարունակեն գործել Ծրագրավորման մոտեցման իրականացման ամբողջ ընթացքում և դրանից հետո:

3. Վարկառուն տեղեկացնում է ԱԶԲ-ին օգնություն տրամադրող բազմակողմ և երկկողմ այլ կազմակերպությունների հետ քաղաքականության վերաբերյալ այնպիսի քննարկումների մասին, որոնք կարող են ազդեցություն ունենալ Ծրագրի իրականացման վրա, և ԱԶԲ-ին հնարավորություն է տալիս դիտողություններ ներկայացնելու քաղաքականության վերաբերյալ այդ քննարկումների արդյունքում ծնված ցանկացած առաջարկի վերբերյալ: Մինչև այդպիսի որևէ նման առաջարկ վերջնականացնելն ու իրականացնելը Վարկառուն հաշվի է առնում ԱԶԲ-ի տեսակետները:

Տեղական արժույթով համարժեք միջոցների օգտագործումը

4. Վարկառուն ապահովում է, որ Տեղական արժույթով համարժեք միջոցներն օգտագործվեն Ծրագրի նպատակներին համահունչ որոշակի ծրագրերի և գործողությունների իրականացումը ֆինանսավորելու նպատակով:

Կառավարում և հակակոռուպցիոն գործողություններ

5. Վարկառուն, Ծրագիրն իրականացնող մարմինը և Իրականացնող մարմինները պետք է՝ ա) համապատասխանեն ԱԶԲ-ի Հակակոռուպցիոն քաղաքականությանը (1998 թվական, առ այսօր կատարված փոփոխություններով) և ընդունեն, որ ԱԶԲ-ն իրեն իրավունք է վերապահում ուղղակիորեն կամ իր գործակալների միջոցով հետաքննելու Ծրագրին առնչվող ցանկացած ենթադրյալ՝ կոռուպցիոն, խարդախ, դավադիր կամ հարկադրանք պարունակող գործելակերպը, և բ) համագործակցեն այդպիսի ցանկացած հետաքննության մասով և տրամադրեն նման հետաքննության բավարար կատարման համար անհրաժեշտ աջակցություն:

Մշտադիտարկում և ուսումնասիրություն

6. Վարկառուն պետք է ապահովի, որ՝ ա) Իրականացնող մարմինները կատարեն պարբերական վերանայումներ՝ գնահատելու համար Ծրագրավորման մոտեցման շրջանակը, իրականացման կազմակերպումը, առաջընթացը, ձեռքբերումները և ազդեցություններըև բ) ՖՆ-ն պատասխանատու է Ծրագրի մշտադիտարկման բոլոր տվյալները վարելու և արդյունքները գնահատելու համար: ԱԶԲ-ի կողմից Ծրագրավորման մոտեցման կիսամյակային վերանայումները դյուրացնելու համար Վարկառուն պետք է ժամանակին տրամադրի համապատասխան՝ մակրոտնտեսական և ֆինանսական տվյալներ և առնչվող տվյալներ՝ այնպիսի մանրամասնությամբ, որն ԱԶԲ կողմից ողջամտորեն կպահանջվի: Վերանայումները պետք է Վարկառուի և ԱԶԲ-ի միջև քննարկումների հիմք լինեն հետագա բարեփոխումների և միջոցառումների մասով, որոնք կարող են դիտարկվել որպես անհրաժեշտ կամ ցանկալի՝ ֆինանսական հատվածի շարունակական զարգացման համար:

7. Վարկառուն պետք է ապահովի, որ՝ Իրականացնող մարմինները դիտարկեն և հաշվետվություն ներկայացնեն Ծրագրի իրականացնող մարմնին Ծրագրի իրենց համապատասխան բաղադրիչների նպատակների շրջանակի, իրականացման կարգավորումների, ազդեցության և առաջընթացի մասին՝ հնարավորություն ընձեռելով Ծրագրի իրականացնող մարմնին համապատասխանեցնելու համար այդ հաշվետվությունները ԱԶԲ-ի՝ հաշվետվություն ներկայացնելու պահանջներին՝ համաձայն սույն Վարկային համաձայնագրի պայմանների: